

ՊԵՏԱԿԱՆ ՓԱԾՈՅԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
„ԶԱԿՈՒՏԻՏՈՒՄԻՐՅՈՒՄ”

628.4

Մ-67

Մի թողեք բարիքը կորջի—զավեցեց թեք թեզ ծախսեցեք Աղիքները

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
„ԶԱԿՈՒՏԻՏՈՒՄԻՐՅՈՒՄ”
ԹԻՖԼԻՍ 1929 թ.

28.06.2013

04 AUG 2010


ՊԵՏԱԿԱՆ ՓԱՍՏՈՒՐԱԿԱՆ ՀՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
„ԶԱԿՈՒՏԻԼՈՒՐՅՈՒՆ“

628.4 44.

0-67

1005
99406

Մի թողեք բարեքը կորշի—ՀԱՎԱՔԵ
ՑԵՔ ՑԵՎ ԾԱԽՄԵՑԵՔ ԱՂԻՔՆԵՐԸ



ՀՀԱՅԱԿԱՆ ՊԱՏՐԱԳՐԱԿԱՆ
“ԶԱԿՈՒՏԻԼՈՒՐՅՈՒՆ”
ԲԻՅԱԼԻ 1929 թ.

Մի ԹՌՂԵՔ ԲԱՐԻՔԸ ԿՈՐԴԻ-ՀԱՎԱՔԵ-
ՑԵՔ ՑԵՎ ԾԱԽԵՑԵՔ ԱՐԻՔՆԵՐԸ

Շատ գյուղացիներ, մորթելով վոչխա-
րը կամ այծը, վոչ մի նշանակություն չեն
տալիս նրանց աղիքներին և դեն են շպըր-
տում. մինչդեռ այդ աղիքներն իրենցից ներ-
կայացնում են մեծ արժեք յեզ կառավա-
րությունը գնում է վորպես ապրանք։ Վոչ-
խարի աղիքը գլխավորապես արտահանվում
է և ձեռք բերած փողով գնվում են արտա-
սահմանում գործիքներ, վորոնք անհրաժեշտ
են թե գյուղատնտեսության և թե արդյու-
նաբերության համար։

Ամեն մի գյուղական տնտեսության
մեջ աղիքները չնշին արժեք ունին, բայց
մի շարք տնտեսություններից հավաքելով՝
նրանք իրենցից ներկայացնում են մեծ ար-
ժեք։

Անցյալ տարվա ընթացքում, մեր ամ-
բողջ Միության մեջ, հավաքվել եւ արտա-
սահմանում ծախվել մոտ 10 միլիոն ըուբ-

Քրավռեպավոր № 1767 Պատվեր № 1726 Տերաժ 1200
Ճ. Տ. Ի. Խ. Պոլ-Մըհսանի 6-րդ տակ. Կեցիսովելի, № 3

լու աղիքներ իսկ Անդրկովկասից ութհարյուր հազար ըուբելու. հետևաբար, համարյանույն գումարի յել գնվել եւ և ներմուծվել մեզ համար արտասահմանյան մթերքներ, մեքենաներ:

Անշուշտ, աղիքների արտահանությունը կարելի կլիներ ել ավելացնել, քանի փորագիքները, ինչպես հում նյութ, ամբողջովին չեն ժողովաւմ և չեն ուղարկվում գործարանները վերամշակման համար, ուստի այդ հում նյութի մեծ մասը կորչում եւ:

Հաշված ե, փոր ավելի քան $\frac{2}{3}$ մորթված վոչխարների աղիքները չեն հավաքվում: Նշանակում ե, փոր մեծ հնարավորություն կա աղիքների արտահանությունն ուժեղացնելու:

Այս կորուստի մեծ մասն ընկնում ե այն գյուղերի վրա, վորոնք հեռու յեն քաղաքներից և զուրկ ճանապարհներից:

Պատճառներից մեկն ել այն ե, փոր գյուղացին անծանոթ ե աղիքները հավաքելու գործին և այն համարում ե իբրև անպետք թափթփուկ:

Ամենից առաջ պետք ե հասկանալ, վորադիքները չպետք ե դեն շպրտել, այլ հարկավոր ե հավաքել և մեծ քանակով հավաքած այդ աղիքները կներկայացնեն իրենցից մեծ արժեք:

Մեր գյուղացիներին աղիքները հավաքելու և պահել սովորեցնելու նպատակով մենք ավելացնում յենք շրջիկների (ագենտների) թիվը, փորոնք պարտավոր յեն շրջել գյուղերը և կազմակերպել աղիքները հավաքելու գործը, փորոշված գինը վճարելով գյուղացիներին կանխիկ: Մի շարք վայրերում աղիքները հավաքում եւ և կոռպերացիան: Թե՛ շրջիկ ագենտների, թե՛ կոռպերացիայի և թե՛ անմիջապես գյուղացիների ձեռքով հավաքած և գործարանը հասցրած (աղիքների գործարաններ գոյություն ունին բոլոր սպանդանոցներին կից) աղիկները յենթարկվում են մշակման (մաքրվում են, ջոկվում, կապվում) և հակերով ուղարկվում ծախելու:

Աղիքները գործադրվում են գլխավորապես յերշիկ (կալբաս) պատրաստելու համար:

Արտասահմանում, գլխավորապես Գեղմանիայում և Ամերիկայում, պատրաստում են մեծ քանակությամբ բարակ յերշիկ, վորի համար գործադրվում են վոչխարների և այծերի բարակ աղիքները:

Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ գլխավորապես գործ ե ածվում յերշիկի համար տափարի լայն աղիքը: Իսկ բարակ յերշիկը մեզ մոտ չի տարածված: Սրանով ելքացատրվում ե վոչխարի աղիքի արտասահման արտահանելու հնարավորությունը:

Վոչխարի աղիքից պատրաստում են նաև լարեր յերաժշտական գործիքների և բուրդ զզելու համար և հատուկ թելեր՝ վիրահատության ժամանակ վերքեր կարելու համար (կետպուտո):

ՀԻՇԵՑԵՔ, ՎՈՐ ԱՂԻՔՆԵՐՆ ԻՐԵՆՅԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԵԾ ԱՐԺԵՔ

Հիշեցեք, վոր աղիքներից ձեռք բերած փողով կառավարությունը զնում ե զյուղատեսնեսության յեվ արդյունաբերության համար անհրաժեշտ գործիքներ:

Աղիքների հավաելեն ու պահելը դրժվար գործ չե, յեվ ամեն սի գյուղացի կարող ե յեվ պես ե սովորի այդ գործը:

ԻՆՉՊԻՍԻ ԱՂԻՂՆԵՐ ՊԻՏԻ ՀԱՎԱՔԵԼ

Վոչխարի և այծի աղիքներից պիտի հավաքել բարակ աղիքներ և կույր աղիք:

Բարակ աղիքը ամենայերկար և ամենանեղ աղիքն ե, վորը մոտավորապես 25—30 մետր (կամ 35-ից մինչև 42 արշին) յերկարություն ունի:

Մյուս աղիքը—կարճ և հաստ—կոչվում է կույր աղիք, վորի մի ծայրը հաստ ե (կույր) իսկ մյուսը՝ բարակ: Այդ կույր աղիքի յերկարությունը մետրից քիչ ավելի ե ($1\frac{1}{2}$ —2 արշին):

Բացի այդ աղիքներից, կա նաև մի ուրիշ աղիք, վորը կոչվում ե շրջաղիք, կամ ճարպաղիք: Նա կտրվում ե կույր աղիքից:

Սպանդանոցից դուրս շրջաղիքը չի հավաքվում: Սպանդանոցում վերցնվում ե շրջաղիքի միայն այն մասը, վորը կոչվում ե հետաղիք (հետեւ աղիք—ցանկա):

Յեթե մեր ցըլիկները ձեզ մոտ են լինում, պահանջեցեք նրանցից գործնական ցուցմունքներ, աղյօները հավաքելու յեզ պահելու վերաբերյալ:

ԽՆԴՊԵՍ ՊԵՏԾ Ե ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՎԱՔԵԼ ԱՂԻՔՆԵՐԸ

Աղյօներ հավաքելու նիշ ձեվը; Յերբ մորթված վոչխարի փորը ճղում են, ամբողջ փորոտիքը դուրս ե թափվում։ Այդ ժամանակ, առաջին հերթին, պետք ե՝ դուրս քաշել բարակ աղիքը։ Բարակ աղիքի մի ծայրը բռնելով և կարելով ստամոքսից, իսկ մյուս մասը՝ կույր աղիքից (տես նկ. 1), յերկու ծայրերը միացնելով իրար, պետք ե զգույշ դուրս քաշել աղիքը ճարպաթաղանթից (տես նկ. 2):

Հանելով ամբողջ աղիք ճարպաթաղանթից, հավաքողը, ձեւքով պահելով աղիքի մեջ տեղից (տես նկ. 3), իջեցնում ե աղիքը տաշտի կամ դույլի մեջ, հետ ե զցում աղիքների ծայրերը տաշտի կամ դույլի (վեդրոյի) յեզրերին, վորպեսզի ջուրը չկեղանու-

վի աղիքների միջի աղբով, և քշելով մատներով այդ աղբը դեպի ցած, բռնում ե աղիքի մեջ տեղից (ողակից) ձախ ձեռքով, իսկ աջ ձեռքով, բռնելով աղիքը ափի մեջ, և մատներով ճղմելով աղիքի պատերը, զգույշ և համաչափ իջեցնում ե աղիքների միջի կեղար (կապաց) մեջտեղից դեպի ծայրերը, բռնելով աղիքի ազատած մասերը ձախ ձեռքով ինչպես այդ անում են թոկ կամ սանձ ծալելիս։ (Տես նկ. 4):

Յերկրորդ անգամ, մաքուր լվանալուց հետո, հիշյալ ձևով, յերբ արդեն աղիքները մաքուր են կեղարից, ծալում են աղիքները, ինչպես թոկը (տես նկ. 5), պարզաջրում և դնում մաքուր տախտակի կամ խսիրի վրա, վորտեղ նա քամփում ե ջրից և հովանում։

Վերջացնելով բարակ աղիքի հավաքելը, անմիջապես պետք ե սկսել հաստ աղիքը հավաքել։ Դրա համար նախ պիտի կտրել հաստ աղիքը շրջապիքից (ճարպաղիքից), հետո մի ձեռքով զգույշ բաժանել նրան ճարպաթաղանթից, իսկ մյուս ձեռքով պահել հաստ աղիքը, վորպեսզի նա չկախվի և չպատռվի նրա մեջ գտնված կեղարի ծանրությու-

Նից (տես նկ. № 6): Բաժանմելով հաստ աղիքը ճարպից, ստացված ճեղքվածքով պետք է դուրս թափել կեղտը (տես նկ. 7): Դրա համար բաց ծայրերից պետք է աղիքի մեջ ջուր լցնել, թափ տալ և քամել կեղտը: Դրանից հետո նորից հաստ աղիքը պարզացրվում է յերկրորդ անգամ:


Յերբ խաղաք եմ գալիս, անցեմ սպանդանոցին կից աղիքների գործարանը, վորտեղ ձեզ ձափ ցույց կտան, քեզ ինչպես պիտի հավաքել յեվ պահել աղիքները:

ՍՈՎՈՐԵՑԵՔ ՀԱՎԱՔԵԼ ՅԵՎ ՊԱՀԵԼ ԱՂԻՔՆԵՐԸ

ՄԻՔ ՇՊՐՏԻ ԱՂԻՔՆԵՐԸ ՇՆԵՐԻՆ ՈՒ ԽՈԶԵՐԻՆ



“ԶԱԿՈՒՏՏԻԼՍԻՐՈՅԻ”



Ն՛, 2

12

“ԶԱԿՈՒՏՏԻԼՍԻՐՈՅԻ”



Ն՛, 3

13




Նկ. 4




Նկ. 5



նկ. 6



ՏԵՍ. ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅ. ԲՈՅ. ԲԱՅԼՈՒԹԻ
ՀԱՅՈՒ - ՀՀԱՅ
Ա. Ա. Մաքարեան
Ա. Խուճիսարդ, Խ. Խ.



նկ. 8

ԻՆՉՊԵ՞Մ ՊԵՏՔ Ե ՊԱՅԵԼ ԱՂԻՔՆԵՐԸ

Զմեռը և ամառը աղիքները լավ պահելու համար հարկավոր ե աղ դնել:

Զուրը քամելուց հետո, աղիքներն աղում են մանրած աղով, թեթև թափ տալիս և 24 ժամ պահում կողովի կամ ծակեր ունեցող արկղի մեջ, բարակ աղիքներն՝ առանձին (черевы), հաստեր՝ առանձին (синюги) (տես նկար 9 և 10): 24 ժամից հետո դարսում են ամուր տակառի կամ տաշտի մեջ, վորը աղաջուրը բաց չի թողնում (տես նկ. 11):

Բարակ աղիքներն աղ անելու համար հարկավոր ե 200 գրամ աղ (կես գրվանքա), իսկ հաստ աղիքների համար 100 գրամ աղ (քառորդ գրվանքա):

Հավաքած աղիքները պահում են տակառի կամ տաշտի մեջ,—ամառ ժամանակ հով տեղ, վորպեսզի չփշանա, իսկ ձմեռ՝ մառանում, վորպեսզի չսառչի:

„ԶԱԿՈՒՏԻԼՈՒՄՈՅԻՆ“

Տաշտը կամ տակառն անպատճառ պետք
ե ծածկել կտավով կամ տախտակով:

Աղիքներ հավաքելը և պահելը դժվար
գործ չե և ամեն մի գյուղացի կարող ե սո-
վորել այդ գործը:

Անհրաժեշտ ե հիշել, վոր պատուված,
փթած և կեղտից չմաքրված աղիքները վոչ
մի արժեք չունեն:

ԱՂԻՔՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ

ԿԱՄԱՐ ՁԵՐԸ ԲԵՐԵՖ ՄԱ-
ՖՈՒՐ ՅԵՎ ԱՄՈՒՐ ԱՄԱՆ
(ԴԱՇՏ ԿԱՄ ՏԱԿԱՐ), ՎՈՐԸ
ԱՂԱՋՈՒՐ ՉԻ ԲԱՅ ԹՈՂՆՈՒՄ

Գլխավոր ուշադրությունը պետք ե
դարձնել, վոր, վոչխարը մորթելուց հետո,
իսկույն և յեթ աղիքները հանվեն զգուշա-
բար, առանց պատուվելու, մաքրվեն կեղտից,
ըստ կարելույն չկտրտվեն մասերի և շատ
լավ աղ անվեն:

„ԶԱԿՈՒՏԻԼՈՒՄՈՅԻՆ“

Աղիքները կանոնավոր հավաքելու հա-
մար դիմեցեք Զակուտիլսիրոյի շրջիկներին,
յերբ նա ձեր գյուղը կգա: Նա ձեզ կսովո-
րեցնի, թե ի՞նչպես պետք ե հավաքել աղիք-
ները վոչխարը մորթելուց հետո:

Այդ գործին կարելի յե ծանոթանալ նաև
մեր աղիքների գործարանում (սպանդանո-
ցին կլց):

ՄԻ ՄՈՌԱՆԱՆՔ

ԾԱՇԿԵԼ ԱՂԻՔՆԵՐՈՎ ԼԻ ԱՄԱ-
ՆԸ ԿՏԱՎՈՎ ԿԱՄ ՏԱԽՏԱԿՈՎ,
ՎՈՐՊԵՍԶԻ ԱՂԻՔՆԵՐԸ ՀԿԵԼՑՈՏ-
ՎԵՆ ՓՈԾԻՈՎ, ՓՈՐՈՎ ԵՎ ԱՅԼՆ:

Զակուտիլսիրյոն պարտավորեցը ել
եր բոլոր գործարաններին և ագենտներին,
վորպեսզի նրանք ձրի ցույց տան (սովո-
րեցնեն) գյուղացիներին, թե ի՞նչպես պետք
ե աղիքները կանոնավոր հավաքել:

Յեթե գյուղացիներից մեկն ու մեկը
ցանկանում ե իր գյուղում աղիքներ հավա-
քել, նա պետք ե համաձայնության զա մեր

շրջիկ հավաքողի հետ, կամ ուղղակի մոտակա աղիքի գործարանի հետ։ Մի վորոշքանակ հավաքելուց հետո, նա պետք է հավաքած աղիքները հանձնի և ստանա վորոշված գինը կանխիկ։

Դյուղացին, աղիքները ծախելով և վորոշ ոգուտ ստանալով, միևնույն ժամանակ պետության ապրանք ե (մատակարարում) տալիս արտասահմանյան տռեարի համար, վորտեղից ստացվում են գյուղին ու քաղաքին անհրաժեշտ մեքենաներ։

Բացի վոչխարի և այծի աղիքներից, հավաքում են (թեև ավելի դժվար) նույնպես տավարի աքիքներ։ Այդ աղիքներն անսխալ հավաքելու և պահելու համար անհրաժեշտ է, վոր այն գյուղացին, վոր իր վրա յե վերցնում այդ գործը, դիմի մեր շրջիկ հավաքողին։ Վերջինս գյուղացուն կսովորեցնի, թե ինչպես ե հարկավոր այդ անել։ Տավարի աղիքների համար շրջիկը ավելի թանգ կը-վճարի, քան վոչխարի աղիքին։

Անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար, կարող եք դիմել վոչ միայն մեր

շրջիկներին, այլ և մոտակա տեղում գտնվող աղիքի գործարանները։

ԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԱՂԻՔՆԵՐԸ ՊԱՀԵՑԵՔ ՀՈՎ ՏԵՂ։

ԶՄԵՌ ԺԱՄԱՆԱԿ ԱՂԻՔՆԵՐԸ ՊԱՀԵՑԵՔ
ՄԱՌԱՍՆԵՐՈՒՄ, ՎՈՐՊԵՍԶԻ ԶԱՌՉԵՆ։

ԸՆԿԵՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ ԱՂԻՔՆԵՐԸ ԴԵՆ ՄԻ ՇՊԸՐ- ՏԵՔ ՀԱՎԱՔԵՑԵՔ ՅԵՎ ԱՌԱՆՑ ՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԵՑԵՔ „ԶԱ- ԿՈՒՏԵԼՍԻՐՈՒ“-ԻՆ։

Հարկավոր դեպքում, խնդրում ենք դի, մել մեր գլխավոր գրասենյակին, — Թիֆլիսկոմմինտերնի փողոց, № 6. Բազու — Մալիկինի փողոց, № 1. Յերևան — Հայպետառին կամ նրա բաժանմունքներին տեղերում։

ՀՀ Ազգային գրադարան



NL0282070

14.034

1921